ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» հունիսի 2016 թվականի N255-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԱԿԱՊԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 11.1-ին, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Սարակապ համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 12-ի Ե26 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարակապի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 11-ի նիստի թիվ 6 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի փետրվարի 24-ի նիստի թիվ 5 արձանագրությունը, Արամ Անտոնյանի 2016 թվականի մարտի 21-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարակապի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Անահիտ Սահակյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Հասմիկ Գալստյանի լիազորությունները,

3) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Լուսնթագ Ավետիսյանի, Վահագն Կիրակոսյանի լիազորությունները,

4) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Արմինե Թառոյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Արամ Անտոնյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Դադարեցնել Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի սեպտեմբերի 22-ին Խորհրդի կազմում հաստատված Սուսաննա Հովհաննիսյանի լիազորությունները՝ Դպրոցի մանկավարժ հանդիսանալու կապակցությամբ:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված և 2013 թվականի հոկտեմբերի 17-ին Խորհրդի կազմում հաստատված Մինաս Ստեփանյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի հոկտեմբերի 17-ը:

5. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Անահիտ Սահակյանին, Ջորիկ Խաչատրյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարակապ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Հասմիկ Գալստյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Արմինե Թառլոյանին, Սվետա Աթոյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Անդրանիկ Ծառուկյանին, Գալուստ Գևորգյանին:

6. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N155 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «28» N255-գ որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԱԿԱՊԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ստեփանյան Մինաս	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Խաչատրյան Զորիկ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Սահակյան Անահիտ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Գալստյան Հասմիկ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Աթոյան Սվետա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Թառոյան Արմինե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Ծառուկյան Անդրանիկ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Գևորգյան Գալուստ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան
Իսկականի հետ ճիշտ է.